ISSN 1829-0361

ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(13)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(13)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(13)

YEREVAN 2024 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(13)

ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Նելլի Կարապետյան – *պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր,* Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ,* Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ,*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,*
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Եսայան

Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում 8

Իրինա Բաղալյան

Այլախոհական և իրավապաշտպան շարժումները
խորհրդային հայաստանում 1960–1980-ական թվականներին 19

Սամվել Պողոսյան

Տիրան արք. Ներսոյանի արխիվը Երուսաղեմի
Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում (տեղեկագիր) 37

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Եվաղյան

Նախնական դիտարկումներ Միտրիդատ I թագավորի դրամի մասին,
չհրապարակված կորպուս և մտորումներ նրա թագավորական
գաղափարախոսության մասին 52

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

Հայկական գաղթավայրերից մի քանիսի ոսկերիչները 70

Հրազդան Թոքմաջյան

Պաշտամունքային կառույցները ասեղնագործություններում 92

Արփակ Ասատրյան

Խորանազարդ սինիներ (ըստ ՀԱԹ, ՀՊԹ, ԵՔՊԹ, ԿԵԹ և ԴԵԹ նյութերի) 99

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Լիաննա Գևորգյան

Ձանգվածային մշակութային միջոցառումները որպես
ժամանակակից թանգարանի գործունեության ակտիվացման միջոց 122

Մեդա Գալստյան

Հավերժի ճամփորդներ. Անկատար երազանքներ ցուցադրությունը 136

Տաթևիկ Մարոյան

Սուրճի առօրեականության պատմության թանգարանային
ներկայացումը և շարունակական կրթության բաղադրիչը 149

Մանե Խառատյան

Ճապոնական ոկիյո-է գրաֆիկական աշխատանքների
ՀՊԹ-ում պահվող հավաքածուն 164

Ասպղիկ Սիմոնյան

Հնագիտական առարկաների վերականգնում. խեցեղենի
վերականգնման առանձնահատկությունները 192

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 199

DOI:10.56653/18290361-2024.13-37

Սամվել Պողոսյան

Գիտությունների Ազգային Ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
samveldpirpoghosyan@gmail.com

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԻ ԱՐԽԻՎԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԱՅՐ ԴԻՎԱՆՈՒՄ (ՏԵՂԵԿԱԳԻՐ)*

Հիմնաբառեր. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Մայր Դիվան, արխիվ, նամակագրություններ, դասատետրեր, թարգմանություններ

"The issuance of his previously unpublished writings will permit future generations to be nurtured by his wisdom" (Bird 2002, 3).
Thomas E. Bird

Երուսաղեմի հայոց պատրիարքության Մայր Դիվանում են պահվում հայ եկեղեցու ակնառու հոգևորական՝ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի (1904–1989) արխիվային մի շարք գրություններ: Դրանք մինչև վերջերս ցրված էին Մայր Դիվանի զանազան պահոցներում և թղթապանակներում:

Այս հոդվածում նկարագրական եղանակով ներկայացված են այդ նյութերի հավաքագրման և դասակարգման աշխատանքները: Ջուգահեռաբար ընդհանուր բնույթի տեղեկություններ են հաղորդվում հայտնաբերված որոշ կարևոր նամակագրությունների, գրվածքների և դասատետրերի վերաբերյալ:

2023 թ.-ի սկզբին պատեհություն ունեցա Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում ի մի հավաքելու երջանկահիշատակ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի գրչին պատկանող և նրան առնչվող արխիվային մի շարք գրություններ: Մեկամսյա կարճատև ժամանակահատվածում երբեմն-երբեմն հաղորդ դառնալով Սուրբ Տեղեաց ծիսակարգերին և այցելելով տերունական ուխտավայրեր՝ գլխավորապես զբաղվեցի այս եզակի հոգևորականի հայտնի ու անհայտ գրվածքները փնտրելով և գտնվածների մասին անհրաժեշտ տեղեկություններ հավաքելով: Դրանք ըստ կարելվույն ուսումնասիրե-

* Ստացվել է 15.03.2024, ուղարկվել է գրախոսման 05.04.2024, ընդունվել է տպագրության 01.07.2024:

լուց[1] հետո, հնարավոր եղավ դուրս բերել համեստ քանակությամբ, սակայն որոշակի կարևորության ձեռագիր և մեքենագիր նյութեր: Դրանք Երուսաղեմի Մայր Դիվանում հասանելի դարձան՝ **Երուսաղեմի Մայր Դիվան, Միաբանական Արխիվ «Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 1»** և **«Երուսաղեմի Մայր Դիվան, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Արխիւ, թղթապանակ 1»** անվանումներով:

Իհարկե, մեկամսյա աշխատանքը բավարար չէր Դիվանի բոլոր թղթապանակներն ու պահոցներն ուսումնասիրելու համար, հետևաբար Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի երուսաղեմյան արխիվը վերջնական տեսքի բերելու համար դեռևս որոշակի աշխատանքի անհրաժեշտություն կա[2]:

Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի արխիվային գրվածքները կարևոր են, քանի որ նա 20-րդ դարում հայ եկեղեցու այն հոգևորականներից է, որի աստվածաբանական, կանոնագիտական, պատմագիտական, եկեղեցաբանական և այլ աշխատություններ մեծ նշանակություն ունեն առնվազն հայ եկեղեցու համար: Այդ աշխատությունների ձևավորումը սկսվել է Երուսաղեմում, որտեղ որոշ ընդհատումներով անցել է Տիրան արքեպիսկոպոսի կյանքի գրեթե երկու բեղուն տասնամյակ: Հետևաբար նրա կյանքի և գործունեության առավել հանգամանալից պատկերը ստեղծելու համար երուսաղեմյան արխիվն առանձնահատուկ կարևորություն ունի: Հայտնի է, որ բացի Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Մայր Դիվանից, նրա արխիվային այլ գրություններ գտնվում են Հայաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների մի քանի արխիվներում: Մինչ Տիրան արքեպիսկոպոսի երուսաղեմյան արխիվային նյութերին անդրադառնալը, նկատենք, որ նրա մահից հետո՝ 90-ականներից, կարևորվելով իրեն անձնապես ճանաչող մտավորականներից, նախ ԱՄՆ-ում, ապա Հայաստանում, լույս են ընծայվել նրա հայաստանյան և ամերիկյան արխիվների երկու հատորներ:

Առաջինը՝ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի վաղ նամակագրությունների ժողովածուն, որ կրում է "Unpublished writtings of Tiran Nersoyan; Early Correspondence 1922–1944" վերնագիրը, 2002 թ.-ին հրատարակվել է Միացյալ Նահանգներում (Nersoyan 2002): Այն ԱՄՆ Նյու-Յորք քաղաքի մոտ գտնվող հայկական Ս. Ներսես Ընծայարանում պահվող Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի արխիվային նյութերի մի մասն է: Այս ժողովածուի նախաբանը, խմբագրությունը և

1 Լրացուցիչ դժվարություն էր առաջացնում այն, որ բացի ցրված լինելուց, Տիրան արքեպիսկոպոսի արխիվային նյութերից որոշները նաև անստորագիր էին: Հետևաբար այդպիսի ձեռագիր աշխատությունների դեպքում հարկ էր լինում դրանց ձեռագիրը համեմատել ստորագրված նյութերի ձեռագրի հետ՝ հստակեցնելու համար առաջինների հեղինակային պատկանելիությունը: Իսկ մեքենագիր անստորագիր նյութերի դեպքում՝ փորձել հասկանալ դրանց աղբյուրները, կամ գաղափարների հարազատությունը Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի մյուս գրվածքների հետ:

2 Ընդհանուր առմամբ Մայր Դիվանի շատ նյութեր դեռևս մշակման և դասակարգման ընթացքի մեջ են: Արխիվային նյութերի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, արխիվային նյութերը պահպանելու ու մատչելի դարձնելու շարունակական մեծ աշխատանքը իրագործվում է ամենապատիվ Նուրհան պատրիարք Մանուկյանի բարձր հովանավորությամբ և Մայր Դիվանի տնօրեն՝ պ.գ.թ. տիար Արշակ Բանուչյանի և Դիվանի անձնակազմի ջանադիր գործունեությամբ:

արևմտահայերեն նամակների անգլերեն թարգմանությունն իրականացրել է պրոֆ. Ռ. Ըրվինը: Քանի որ երջանկահիշատակ սրբազանը երկար տարիներ ապրել է Միացյալ Նահանգներում, ըստ երևույթին, այստեղ է նրա արխիվային գրվածքների մեծ մասը: Հայտնի է, որ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ամերիկյան արխիվի հրատարակումը, բարեբախտաբար, շարունակական է լինելու: Պրոֆ. Ռ. Ըրվինի գրած նախաբանը և ժողովածուում տեղ գտած նամակները կարևոր են հասկանալու համար Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ոչ միայն կենսագրական անցքերը (հրատարակված են առավելապես անձնական բնույթի նամակներ), այլև աստվածաբանական աշխարհայացքը:

Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի գրվածքների մյուս ստվարածավալ ժողովածուն՝ «Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության. Տիրան Արք. Ներսոյան», 2004 թ. հրատարակվել է դոկտ. Ս. Բեհբությանի աշխատասիրությամբ, ով այստեղ ի մի է բերել առավելապես Հայաստանի տարբեր արխիվների բազմաթիվ և բազմաբովանդակ նյութեր (Վավերագրեր 2004): Այս ժողովածուում, ի շարս այլ գրությունների, արժեքավոր են ժողովածուի գրեթե կեսից սկսվող Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի կանոնագիտական և եկեղեցահիրավական բնույթի նամակներն ու ուսումնասիրությունները: Այդուհանդերձ, չնայած աշխատասիրողի կատարած մեծ աշխատանքին, այս ժողովածուում կան որոշ բացթողումներ: Օրինակ՝ մի քանի կարևոր գրությունների մասին տվյալները՝ գրման վայրը, ժամանակը, հասցեատերը բաց են թողնված, ինչպես և նշված չէ, թե այդ նյութերի բնօրինակները, որ արխիվում են գտնվում: Չնայած ընդարձակ նախաբանին, նշված չէ նաև, թե ուսումնասիրված արխիվների արդյոք բոլո՞ր նյութերն են ընդգրկված այս ժողովածուում, թե՞ ոչ: Հետևաբար Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի հայաստանյան արխիվային նյութերի ամբողջականությունը տվյալ հատորում թեական է և լրացուցիչ աշխատանքի կարոտ:

Բացի այդ, Տիրան արքեպիսկոպոսի կողմից Միացյալ Նահանգներում 1961 թ. հիմնված «Ս. Ներսես» ընծայարանի ինտերնետային կայքում կարելի է գտնել նաև նրա 1988 թ.-ի “Canon Law” արխիվային ձայնագրությունները (Nersoyan 1988):

Գալով Տիրան արքեպիսկոպոսի երուսաղեմյան արխիվին, հարկ է նկատել, որ այն իր ներկա ծավալով մեծ չէ, սակայն որոշ չափով ամբողջացնում է նրա կյանքի տարբեր շրջափուլերի մասին տեղեկությունները՝ հավելյալ լույս սփռելով նրա գրավոր ժառանգության և առաջ քաշած աստվածաբանական ու փիլիսոփայական գաղափարների վրա:

Տիրան արքեպիսկոպոսի երուսաղեմյան արխիվային նյութերի գոյության մասին մեզ հայտնի առաջին հիշատակությունն արված է 1954 թ. Թորգոմ վարդապետ Մանուկյանի կողմից Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի քահանայության 25-ամյակին նվիրված գրքույկում (Մանուկեան 1956, 16): Խոսքը յոթ անտիպ ձեռագիր աշխատությունների մասին է, որոնց գտնվելու վայրը, ըստ Թորգոմ վարդապետ Մանուկյանի հաղորդած տեղեկության, հավանաբար Երուսաղեմն է: Դրանք են՝

Ա. «Սուրբ Մեսրոպի նկարագիրը»,

Բ. «Պատմութիւն Ընդհանուր Եկեղեցւոյ»,

Գ. «Հովուական Աստուածաբանութիւն»,

Դ. «Վարդապետական Աստուածաբանութիւն»,

Ե. «Հոգևորական Աստուածաբանութիւն»,

Զ. «Մեկնութիւն Սաղմոսաց»,

Է. «Մեկնութիւն Հռովմայեցւոց Թղթոյն» (Մանուկեան 1956, 16–17):

Այս աշխատություններից մի քանիսը, ինչպես պարզվեց, իրապես գտնվում են Երուսաղեմի Մայր Դիվանում: Սակայն մինչ դրանց անդրադառնալը, նկարագրվող արխիվին առավել համակարգված պատկեր տալու համար նշենք, որ Տիրան արքեպիսկոպոսի կյանքի երուսաղեմյան շրջանի հայտնաբերված գրվածքները ստորև պայմանականորեն բաժանվելու են ըստ երկու ենթաշրջանների՝ վարդապետական (1930–1937) և պատրիարքական (1956–1958)՝ նկատի ունենալով հայտնաբերված արխիվային նյութերի գրման (երբեմն հավանական) ժամանակաշրջանները[3]:

Վարդապետական ենթաշրջանը (1930–1941թթ.) ներառում է Անգլիայում նրա ուսման, Երուսաղեմում մի քանի տարիների նշանակալի ուսուցչական և ուսումնական գործունեության, ապա նախ Փարիզում, իսկ հետո Անգլիայում հովվական ծառայության ժամանակահատվածը: Այդ ժամանակ է, որ Տիրան արքեպիսկոպոսն Անգլիայում ուսանելուց հետո, 26 տարեկանից վարել է «Սիոն» ամսագրի խմբագրի, «Ժառանգավորաց» Վարժարանի և Ընծայարանի տեսչի, քիչ ուշ Միաբանական ընդհանուր ժողովի ատենապետի ու այլ կարևոր պաշտոններ: Վարդապետական ենթաշրջանից ուշադրության արժանի արխիվային նյութերից մի քանիսի մասին ստորև առավել մանրամասն:

Վարդապետական ենթաշրջանից ամենավաղը թվագրվում են Լոնդոնից գրված երկու նամակներ (մեկի գրման թվականը՝ 1930, իսկ մյուսինը՝ անհայտ, բայց ակնհայտորեն նույն ենթաշրջանից): Դրանք կարևոր են, քանի որ անուղղակիորեն մատնանշում են նաև այն անձանց և այն մոտեցումներն ու թեմաները, որոնք հետագայում առանցքային են լինելու Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի աշխատություններում: Երկու նամակներն էլ ուղղված են այդ ժամանակ Փարիզում որպես Եվրոպայի հայկական համայնքների առաջնորդ պաշտոնավարող Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանին: Թվակիր նամակում հիմնականում այն դասախոսությունների նկարագրություններն են, որոնց Անգլիայում որպես ազատ ունկնդիրներ մասնակցել են Տիրան և Նորայր (Պողարյան) աբեղաները: Առաջին նամակում մասնավորապես կարդում ենք (Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ (հետայսու՝ ԵՄԴ ՄԱ) Տիրան արք. Ներսոյեանի թղթեր, թ. 1, վ. 2), որ այդ ժամանակ Տիրան աբեղան ծանոթ է Քինգս Քոլեջի հիմնադիր և «աստ-

3 Ուսանողական ենթաշրջանից (1921–1924) որևէ նյութ այս մեկամսյա փնտրտուքի ժամանակ Դիվանում ի հայտ չեկավ: Սակայն, քանի որ Տիրան արքեպիսկոպոսն իր ուսանողական շրջանում աշակերտել և գործակցել է Երուսաղեմի ուսյալ հոգևորականների՝ Եղիշե պատրիարք Դուրյանին, Թորգոմ պատրիարք Գուշակյանին, Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանին և այլոց, ապա հնարավոր է, որ 1920-ականների շրջանում գործող ականավոր անձանց թղթապանակներում հետագայում գտնվեն որոշ նյութեր, որոնք կարող են լույս սփռել Տիրան արքեպիսկոպոսի ուսանողական շրջանի աշխատությունների վրա, եթե, իհարկե, այդպիսիք եղել են:

վածյան բարեշրջություն» շարժման ժամանակի անվանի ներկայացուցիչ Շառլ Գոռին (Charles Gore), որի աստվածաբանական գաղափարներին ծանոթությունը երևում է Տիրան արքեպիսկոպոսի հետագա գրվածքների մեջ, հատկապես՝ «Սիոն» ամսագրի վաղ հոդվածներում: Ընդսմին հիշատակվում է ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարքի ներկայացուցչի «Ռեզուրեքշընն» դպրանոցում կարդացված դասախոսության ընթացքում հայ եկեղեցու քրիստոսաբանությանը տված աչառու գնահատականը, ինչը, ինչպես երևում է այս նամակից, արդեն այդ ժամանակ, երիտասարդ Տիրան աբեղայի ուշադրության կենտրոնում է եղել և թերևս մեկն է այն ազդակներից, որ պատճառ են դարձել նրա կողմից հետագայում հայ եկեղեցու քրիստոսաբանական ուսումնասիրությունների մեջ խորասուզվելու համար: Իսկ Լոնդոնից գրված երկրորդ նամակում, իմիջիայլոց, Տիրան արքեպիսկոպոսն Անգլիայում գործող հայ մտավորական Արշակ Սաֆրաստյանի «MASSIS» ամսագրում տպագրված մի հոդվածից մեջբերում է հատվածական թարգմանություն, որում ակնարկներ կան Օսմանյան կայսրության հայության վրա ֆրանսիական վիպապաշտական շարժման թողած բացասական ազդեցության մասին. մի գաղափար, որը Տիրան արքեպիսկոպոսի համար առանցքային է ֆրանսիական վիպապաշտության ազդեցությունը կրող արմաշական հայտնի հոգևորականներին հետագայում քննադատելիս, որոնցից մեկը նաև այս նամակի հասցեատերն է (ԵՄԴ ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թղթոն, թ. 1, վ. 2):

Այս շրջանի ուշագրավ այլ գրություններ են Տիրան արքեպիսկոպոսի տեսչական շրջանի նամակներն ու դասատետրերը: Լոնդոնից Երուսաղեմ նրա վերադարձին, երբ նույն Թորգոմ Գուշակյանը գահակալում է որպես Երուսաղեմի հայոց պատրիարք, Տիրան արքեպիսկոպոսը նշանակվում է «Ժառանգաւորաց» Վարժարանի և Ընծայարանի տեսուչ: Երկուսի փոխանակած նամակներում (1932–37թթ.) կարելի է ընթերցել Տիրան արքեպիսկոպոսի շուրջ վեցամյա տեսչական հոգածության կարևոր մանրամասներ. ուսանողության կյանքում շոշափելի կենցաղային և կրթական առաջադիմական փոփոխությունների առաջարկները, տեսչի պաշտոնից պարբերական հրաժարականներ, ուսանողների ընդունելության, քննությունների, հեռացումների մանրամասներ և այլն (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թղթոն, թ. 1, վ. 1): Այս ժամանակաշրջանը վարժարանի պատմության մեջ թերևս լավագույններից է, քանի որ այդ ընթացքում այդտեղ դասավանդել են Թորգոմ պատրիարք Գուշակյանը, Հակոբ Օշականը, Շահան Պերպերյանը, Նորայր վարդապետ Պողարյանը, ինքը՝ Տիրան վարդապետ Ներսոյանը և այլք:

Նրանց շնորհիվ «Ժառանգաւորաց» Վարժարանի և Ընծայարանի դասավանդման առարկայացանկը զգալի փոփոխությունների է ենթարկվում, կազմվում են նոր առարկաների դասատետրեր, հրավիրվում են նոր մասնագետներ և այլն: Այդ շրջանում ստեղծված դասատետրերից Դիվանում հնարավոր եղավ հայտնաբերել հետևյալները՝ **«Հովուական աստուածաբանութիւն»**, **«Հոգևորական աստուածաբանութիւն»**, **«Ընդհանուր Եկեղեցու պատմութիւն»**, **«Ծիսական աստվածաբանություն»**, **«Մեկնութիւն Գործք Առաքելոցի»** (Երուսաղեմի Մայր Դիվան, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Արխիւ, (հետայսու՝ ԵՄԴ, ԺՎԸ) թ. 1, վ. 3, 4, 5): Հավանաբար հենց սրանց մասին է հիշատակում Թորգոմ

վարդապետ Մանուկյանը իր վերոհիշյալ գրքույկում: Այս տետրակները հետագայում ևս կիրառվել և ամբողջացվել են Ժառանգավորաց վարժարանի այլ դասախոսների կողմից, ինչը երևում է այս տետրակների որոշ օրինակների վրա արձանագրված անուններից՝ Շավարշ վարդապետ Գույումճեան, Եղիշե վարդապետ Տէրտէրեան և այլք: Ընդհանուր առմամբ սրանք առավելապես օտար աղբյուրների համադրաբար կազմված ուսուցողական նյութերն են:

Ամենայն հավանականությամբ վարդապետական այս ենթաշրջանին է պատկանում Դիվանի պահոցներից մեկից գտնված մի տետրակ, որ պարունակում է **«Իրականութեան յօրինուածքը»** վերնագրով մի ձեռագիր թարգմանություն, որի նույնականացումը հետագայում ամիսների ջանքեր պահանջեց (ԵՄԴ, ԺՎԸ, թ. 1, վ. 2): Սա, ինչպես պարզվեց, անգլիկան հայտնի աստվածաբան Ուիլյամ Թեմփելի (William Temple) «Christus Veritas» գրքի թարգմանության մի փորձ է, որ հավանաբար նախաձեռնել է Տիրան արքեպիսկոպոսը, որը սակայն անավարտ է մնացել: Ուիլյամ Թեմփլը Տիրան արքեպիսկոպոսի համար դարձյալ կարևոր և ազդեցիկ մի աստվածաբան է, ով իր հերթին անգլիկան աշխարհում վերոհիշյալ Շառլ Գոռին հաջորդող առանցքային հեղինակ է:

«Իրականութեան յօրինուածքը». անստորագիր ձեռագիրը

Երուսաղեմի հայոց պատրիարքության Մայր Դիվանի պահոցներից մեկից, որտեղ հավաքված են անստորագիր և դասակարգման համար դեռևս հստակ տեղեկություն չպարունակող գրվածքներ, հայտնաբերվեց 85 էջերից բաղկացած մի տետրակ, որի միայն 11 էջերի վրա դժվարընթեռնելի ձեռագրով շարադրված գրությունը կրում էր «Իրականութեան յօրինուածքը» վերնագիրը (ԵՄԴ, ԺՎԸ, թ. 1, վ. 2): Գրվածքի հեղինակի կամ գրման թվականի վերաբերյալ տեղեկություններ չկային: Նախնական ենթադրությունը, որ այն կարող է պատկանել Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանին հիմնված էր «իրականության» մասին աստվածաբանական-փիլիսոփայական գաղափարներ արծարծող նրա մի նամակի վրա, որը հրատարակվել է պրոֆ. Ռ. Ըրվինի կողմից պատրաստված արխիվային նամակների վերոհիշյալ ժողովածուում (Nersoyan 2002, 30): Այդտեղ Տիրան արքեպիսկոպոսը հայ եկեղեցու քրիստոնսաբանությունը բացատրում է ժամանակի անգլիական փիլիսոփայության որոշ եզրեր և գաղափարներ կիրառելով ու այն այդպես առնչում «մեկ, բացարձակ *իրականության*» հղացքի հետ: Այլ կերպ ասած «իրականության» այս տեսությունն աղերսվում է այն ժամանակաշրջանի փիլիսոփայական թեմաների հետ, երբ Տիրան արքեպիսկոպոսն ուսանել է Անգլիայում: Մասնավորապես ուշ «Բրիտանական Իդեալիզմի» առանցքային թեմաներից մեկը լինելով՝ «իրականության» մասին խոսույթը շարունակվել է Ալֆրեդ Ն. Ուայթհեդի աշխատություններում, որի գաղափարներին քաջածանոթ է եղել Տիրան արքեպիսկոպոսը (Nersoyan 2002, 31–32): Այս տեղեկություններով պայմանավորված տվյալ ձեռագիրը սկզբնապես հենց Տիրան արքեպիսկոպոսի կողմից գրված փիլիսոփայական բնույթի կիսատ մնացած մի փորձ համարելով և դրանում Տիրան արքեպիսկոպոսին հայտնի անգլիացի այլ փիլիսոփաների անուններ գտնելով՝ այս ենթադրությունն ավելի ամրապնդվեց: Սակայն Դիվանում պարբերաբար ծանոթա-

նալով Տիրան արքեպիսկոպոսի ձեռքով գրված և ստորագիր այլ գրվածքներին՝ ակնհայտ դարձավ «Իրականութեան յօրինուածք»-ի և վերջիններիս ձեռագրերի ոճական տարբերությունը: Այդուհանդերձ դժվար էր պատկերացնել, որ որևէ այլ անձ կարող էր նման բան գրել: Մի քանի անգամ այս գրությունը վերընթերցելու փորձերից հետո պարզ դարձավ, որ սա ոչ թե հեղինակային գրվածք է, այլ՝ թարգմանություն, քանի որ դրանում ստեպ-ստեպ ի հայտ էին գալիս խմբագրական միջամտություններ՝ սլաքներով բառերի տեղափոխություններ, հոմանիշների կիրառություններ, անգլերենի ուղղակի կիրառություններ և այլն: Այդպես լիովին հիմնավոր դարձավ այն, որ «Իրականութեան յօրինուածք»ի հեղինակը Տիրան արքեպիսկոպոսը չէ, և որ այն նրա ձեռքով չի գրվել: Այս հակասական կոահումների հանգուցալուծումը սկսվեց այն պահից, երբ մեկ այլ պահոցից գտնվեց «Ժառանգաւորաց» վարժարանի դասատետրերի 1930-ականների մի տուփ, որտեղ ի շարս այլ նյութերի ի հայտ եկան *Սիմեոն սրկ. Մարտիրոսյանի* ձեռքով գրված մի քանի դասատետրեր (տետրերի էջերը ստորագրված էին այս անունով): Այս դասատետրերի ձեռագիրը և «Իրականութեան յօրինուածքը» փիլիսոփայական էսսեի ձեռագիրը ակնհայտորեն նույնն էր: Հարկ դարձավ պարզել, թե ո՞վ է Սիմեոն սարկավագը, ի՞նչ կապ կարող էր ունենալ Տիրան արքեպիսկոպոսի կամ Բրիտանական Իդեալիզմի հետ: Բարեբախտաբար Երուսաղեմի Հայոց Պատրիարքության «Տօնացոյց»-երում արձանագրված են գրեթե բոլոր տարեշրջանների ուսանողների և դասախոսների անունները: 1930-ականների սկզբի «Տօնացոյց»-ների տեղեկություններից պարզ դարձավ, որ Սիմեոն սարկավագը նույն ինքը Հայրիկ աբեղա Արսլանյանն է (ում անունն ու ազգանունը 1932 թ. ձեռնադրության ժամանակ փոխվել է), և ով «Ժառանգաւորաց» Ընծայարանում աշակերտել է Տիրան արքեպիսկոպոսին: Այսքանով հասկանալի էր դառնում միայն, որ այն գրված է Սիմեոն սարկավագի ձեռքով, սակայն դեռ պարզ չէր, թե ի՞նչ աշխատանք է թարգմանված և թե արդյոք այս թարգմանությունն արել է Սիմեոն սարկավագն ի՞ր նախաձեռնությամբ կամ որևէ մեկի ուղղորդմամբ (հավանաբար Տիրան արքեպիսկոպոսի): Ամիսներ անց, ծանոթանալով անգլիկան աստվածաբան հայր Ուիլիամ Թեմփլի աշխատություններին, որոնց մեջ նաև **Christus Veritas** գրքին՝ պատահականորեն դրանում հանդիպեցի՝ **«The Structure of Reality»** վերնագրով մի գլխի («Իրականութեան յօրինուածքը»): Տեքստերի համեմատությամբ պարզվեց, որ «Իրականութեան յօրինուածքը» Ուիլյամ Թեմփելի «Christus Veritas» գրքի առաջին գլխի թարգմանության մի փորձ է: Հարցերը, թե ի՞նչ շարժառիթով կամ ի՞նչ ձևով է այս գործը թարգմանվել և կամ ու՞մ նախաձեռնությամբ, դեռ մնում են չլուծված: Սակայն ենթադրելի է, որ Տիրան արքեպիսկոպոսի տեսչության շրջանում, լինելով ավարտական տարեշրջանի ուսանող, Սիմեոն սարկավագը կարող էր թարգմանել այն որպես հանձնարարություն, կամ պարզապես գրի առնել Տիրան արքեպիսկոպոսի կողմից թելադրվող թարգմանությունը, կամ էլ նրա ազդեցությամբ (լսած լինելով նրանից) փորձեր թարգմանել անգլիկան աստվածաբանության 20-րդ դարի ամենանշանավոր աշխատություններից մեկը: Այս վարկածն ամրապնդվում է նաև այն իրողությամբ, որ 1931 թ., երբ կարճատև ժամանակով Տիրան արքեպիսկոպոսը փոխարինել է Թորգոմ պատ-

րիարքին որպես «Սիոն» ամսագրի խմբագիր, այստեղ տպագրվում է այդ ժամանակ Անգլիայում հայտնի աստղագետ, մաթեմատիկոս սիր Ջեյմ Ջինսի «Խորհրդավոր տիեզերք» գրքից (“The Mysterious Universe”) մի հատված և որոշ պատառիկներ այդ ժամանակի հայտնի այլ հեղինակներից (Ջիյնս 16–17, 1931): Հետևաբար հավանական է, որ Տիրան արքեպիսկոպոսը փորձել է օտար հեղինակների գրվածքներ թարգմանել և իր միջավայրին ծանոթ դարձնել ժամանակակից գիտությանը և աստվածաբանությանը (Հատկապես առաջնայնություն տալով «աստվածյան բարեշրջության» շրջանակներին պատկանողներին):

Այդուհանդերձ, էական է ոչ այնքան այս կիսատ թարգմանությունն իր բովանդակությամբ, այլ հենց թարգմանելու և այս ուղղության՝ «աստվածյան բարեշրջության» հայկական շրջանակներում ծանոթացման փորձը: Չնայած «Սիոն» ամսագրում մեծ արդյունք չգրանցած թարգմանությունների և հոդվածների այս շարքին, այդուհանդերձ անգլիկան «մարմնացման վարդապետության» և «աստվածյան բարեշրջության» առնչությունը Տիրան արքեպիսկոպոսի որոշ հոդվածների հետ ակնհայտ է: Այդ առնչությունները Տիրան արքեպիսկոպոսի համար բանալի են եղել վերաբացահայտելու հայ եկեղեցու քրիստոսաբանությունն ու այն նոր լեզվով ներկայացնելու համար:

Վարդապետական ենթաշրջանի նամակների մեկ այլ խումբ բաղկացած է Տիրան արքեպիսկոպոսի և Երուսաղեմի հայոց հաջորդ պատրիարք Մեսրոպ Նշանյանի 1939–1941 թթ. նամակներից: Դրանցում կարելի է կարդալ Փարիզի հայկական համայնքի կանոնադրությունը կարգավորելու փորձերի, հայր Շահեին (հավանաբար Աճեմյան) Անգլիայում կրթության ուղարկելու, եպիսկոպոսի աստիճանի ստացման, դավանական հարցերի շուրջ նրա դիրքորոշման պարզաբանման և այլ իրողությունների մասին: Սրանք Տիրան արքեպիսկոպոսը գրել է իր ծառայությունը Փարիզում, իսկ հետո Լոնդոնում շարունակելով (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թ. 1, վ. 3):

Կարևոր նամակների մեկ այլ խումբ է Տիրան արքեպիսկոպոսի և Եղիշե վարդապետ Տերտերյանի (հետագայում Երուսաղեմի հայոց պատրիարք) 1949–1955 թթ. միջև եղած նամակագրությունը: Տասը նամակների մեջ քննարկվում են Մեսրոպ պատրիարք Նշանյանի մահից հետո Երուսաղեմի հայոց միաբանության կյանքին և պատրիարքական ընտրություններին վերաբերող հարցեր, ՄԱԿ-ում «Ս. Տեղեաց» խնդրի առնչությամբ համապատասխան պատվիրակություն ստեղծելու առաջարկներ, Տիրան արքեպիսկոպոսի 1950 թ. Երուսաղեմ այցելության ու այլ իրադարձությունների շուրջ տեղեկություններ: Սրանք 20-րդ դարի հայ անվանի երկու հոգևորականների թերևս վերջին բարեկամական նամակներն են, որոնց հաջորդելու է նրանց ցմահ թշնամության շրջանը (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թ.1, վ. 6):

Գալով **պատրիարքական ենթաշրջանի**՝ 1955–1958 թթ. արխիվային նյութերին, հարկ է նշել, որ դրանց զգալի մասը բաղկացած է զանազան անձանց նամակագրություններից, ժողովական արձանագրություններից և բացատրագրերից, որոնք կապված են Տիրան արքեպիսկոպոսի Երուսաղեմից վտարման և պատրիարքական պաշտոնից հեռացվելու հետ: Նամակներից շատերը ուղղված են տե-

ղական և միջազգային պաշտոնյաների՝ նպատակ ունենալով վերականգնելու ընտրյալ պատրիարքին (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թղթոն, թ. 3, վ. 1–8)։ Սա Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի կյանքի ամենացավալի դեպքերից մեկն է[4]։

Հավանաբար պատրիարքական շրջանին է պատկանում “**NOTES ON THE NATURE OF AN ICON OF THE THEOTOKOS**” Տիրան արքեպիսկոպոսի ստորագրությամբ մեքենագիր մոտ 4 էջերի վրա շարադրված հոդվածը (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թղթոն, թ. 2, վ. 1), որի վրա ցավոք արձանագրված չէ դրա գրման թվականը, հասցեատերը և հայտնի չէ, թե արդյո՞ք այն որևէ տեղ հրատարակվել է, թե՝ ոչ։ Այստեղ, հիմնվելով սուրբգրային և ծիսական գրականության վրա, բացատրություններ, նկատառումներ և առաջարկներ են տրված Տիրամորը և մանուկ Հիսուսին պատկերելու վերաբերյալ։ Այն թերևս գրվել է Ս. Խորանում ծիսական կիրառության նպատակով պատրաստվող սրբապատկերների համար՝ որպես ուղեցույց և մեկնաբանություն։

Հրատարակված, սակայն Երուսաղեմից դուրս գրեթե անհայտ, հետևաբար հիշատակության արժանի է Դիվանում գտնվող Տիրան արքեպիսկոպոսի “Religion and Communism” անունով գրքույկը (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թղթոն, թ. 2, վ. 2)[5]։ Դրա հրատարակման պատճառն ամենայն հավանականությամբ Տիրան արքեպիսկոպոսի 1942 թ. Լոնդոնում տպված «A Christian Approach to Communism» գրքի 1957-58 թթ.-ի անարդարացի շահարկումն է, ինչով որոշ անձինք նպատակ են հետապնդել Հորդանանի իշխանության մոտ կասկածներ առաջացնել Տիրան արքեպիսկոպոսի Սովետական Միության հետ կապ ունենալու վերաբերյալ։ “Religion and Communism”-ը, կարելի է ասել, հիշյալ գրքի սեղմագիրն է։ Դրան կցված է նաև հորդանանցի իրավաբան Հաննա Նադեին ուղղված այդ գրքի մեկէջյան բացատրությունը և այն գրելու հիմնավորումը (նույն տեղում)։

Հետաքրքրական է նաև ամենայն հավանականությամբ **Who’s who** ամսագրի համար պատրաստված նրա կենսագրությունը, որտեղ հետաքրքիր տեղեկություններ կան Անգլիայում նրա հովվական ծառայության շրջանի վերաբերյալ։ Այդուհանդերձ հայտնի չէ, թե արդյոք այն հիշյալ ամսագրում հրատարակվել է, թե ոչ (նույն տեղում)։

Ամենայն հավանականությամբ Տիրան արքեպիսկոպոսին է պատկանում նաև “**Atheism**” վերնագրով մեքենագիր կիսատ պահպանված մի հոդված, որի հեղինակը, եթե նույնիսկ նա չէ, ապա այն Անգլիայում ուսանելու տարիներից պահպանված նրա համար կարևոր դասախոսություններից մեկն է։ Այստեղ հանրագիտարանային ոճով քննության են առնված անաստվածության գիտական և փիլիսոփայական բազմաթիվ մոտեցումներ (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թղթոն, թ. 2, վ. 5), որոնք հետագայում իր վերոնշյալ “A Christian approach to Com-

4 Այդ դեպքերից են նաև Առաջին Համաշխարհայինի ընթացքում Մեծ Եղեռնը, որի ժամանակ մահանում է նաև նրա փոքրիկ քույրը, 1932 թ. իր հոր՝ Տ. Ներսես ավագ քահանա Թավուգճյանի ողբերգական սպանությունը, Երկրորդ Համաշխարհայինը, որի ժամանակ նա եղել է Անգլիայում, իսկ կյանքի վերջում՝թերևս Լեռնային Ղարաբաղի դեպքերը։

5 Նույնը հայերենով տպվել է Սիոն ամսագրի 1958 թ. 4–5 համարներում «Կրօնքը և Համայնավարութիւնը» վերնագրով։

munism” գրքում կիրառում է նաև Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը:

Կարևորելով Երուսաղեմում պահվող Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի արխիվային հավաքածուի լիարժեք ներկայացումը՝ ավելորդ չենք համարում ընթերցողին ճանաչելի դարձնել ստորև բերված ցանկը, որը Դիվանում գտնված գրքերի առաքման վերծանված մի ստացական է, որ ամենայն հավանականությամբ պատկանել է Տիրան արքեպիսկոպոսին: Դրա մասին են խոսում գրքերի հեղինակներն ու թեմաները, որոնցով Տիրան արքեպիսկոպոսը հետաքրքրվել է և կիրառել է իր ուսումնասիրությունների մեջ. անգլիական փիլիսոփայություն և աստվածաբանական գրականություն, նյութապաշտություն (materialism), խորհրդային փիլիսոփայություն, պատմագիտություն և այլն:

1. [A. N.] Wheathead, “Adventures of Ideas”, [1933]
2. [Grace Mary] Crowfoot, “From Cedar to Hyssop: [A study in the folklore of Plants in Palestine, 1932]
3. A. J. Russell, “For Sinners Only”, [1932]
4. [Cecily Spencer-Smith Phillimore], “By an Unknown Disciple”, [1919]
5. [J.S.] Haldane, “Materialism”, [1932]
6. [Charles Frederick] D’Arcy, “Providence and the World-Order” [1932]
7. [N.] Maclean, “Death Cannot Sever” [1932]
8. [W. R.] Inge, “Christian Ethics [and Modern Problems” 1930]
9. [W.E.D.] Allen, “A History of the Georgian People” [1932]
10. [Julius F.] Hecker, “Moscow Dialogues [Discussions on Red Philosophy” 1934]
11. [J. Henry] Breasted, “The Conquest Of Civil[ization” 1926]
12. [Harry Charles] Luke, “Ceremonies at the Holy Places” [1932] (ԵՄԴ, ՄԱ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թ. 1, վ. 7 (անկյունավոր փակագծերի բովանդակությունը բնօրինակում բացակայում է)):

Եզրակացություն

Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի Երուսաղեմի հայոց պատրիարքության Մայր Դիվանում պահվող արխիվի թերևս զգալի մասն ամփոփ ուրվագծելուց հետո, կարելի է ասել, որ հիշյալ գրությունները Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանին կրկին ներկայացնում են որպես հոգատար և գործուն տեսչի, նոր գաղափարներով օժտված վարդապետի, իր ժամանակի աստվածաբանության և փիլիսոփայության քաջ գիտակի և քաղաքական միջավայրի հետ լրջորեն աշխատող անձի: Սրանք մասունքներ են, որոնք ամբողջացնում են այն խճանկարը, որ արտացոլում է երջանկահիշատակ հոգևորականի այնքան համեստ, սակայն հայ եկեղեցու համար կարևոր կերպարը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 1, վավերագիր 1:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 1, վավերագիր 2:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 1, վավերագիր 3:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 1, վավերագիր 6:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 1, վավերագիր 7:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 2, վավերագիր 1:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 2, վավերագիր 2:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 2, վավերագիր 5:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 1:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 2:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 3:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 4:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 5:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 6:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 7:

Երուսաղեմի Մայր Դիվանի Միաբանական Արխիվ, Տիրան արք. Ներսոյեանի թողոն, թղթապանակ 3, վավերագիր 8:

Երուսաղեմի Մայր Դիվանի, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Արխիւ, թղթապանակ 1, վաւերագրեր 2:

Երուսաղեմի Մայր Դիվանի, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Արխիւ, թղթապանակ 1, վաւերագրեր 3:

Երուսաղեմի Մայր Դիվանի, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Արխիւ, թղթապանակ 1, վաւերագրեր 4:

Երուսաղեմի Մայր Դիվանի, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Արխիւ, թղթապանակ 1, վաւերագրեր 5:

Հրատարակված փաստաթղթերի ժողովածուներ

ԲԵՀԲՈՒԹՅԱՆ 2004 – «Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության. Տիրան Արք. Ներսոյան», աշխ. Ս. Բեհբությանի, Գիրք ԺԲ, 2004:

NERSOYAN 2022, – Nersoyan T., Unpublished writings of Tiran Nersoyan; Early Correspondence 1922–1944, edited and translated by R. Ervine, 2002.

Գրականություն

ՄԱՆՈՒԿԵԱՆ 1954, – Մանուկեան Թորգոմ վարդապետ, *Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեան, Քահանայութեան 25-ամեայ Յոբելեանին Առիթով*, Յոբելինական Կեդրոնական Յանձնախումբ, 1954:

ՔԻՅՆՍ 1931 – Քիյնս Ք., *Խորհրդաւոր Տիեզերքը*, Երուսաղեմ, *Սիոն*, 1931, (1), 16–17:

BIRD 2002 – Thomas E. Bird, “Archibishop Tiran Nersoyan (1904–1989) An Appreciation”, NY, *St. Nerses Theological Review*, Volume 7, 2002, 1–3.

Էլեկտրոնային նյութեր

NERSOYAN 1988, – Nersoyan Tiran Abp., Canon Law, St. Nerses Armenian Seminary, 1988, https://stnersess.edu/resources/abp-tiran-nersoyan-audio-files/ (14.03.2024, 15:47).

Samvel Poghosyan
MA in Theology

National Academy of Science Institute of Philosophy, Sociology and Law
samveldpirpoghosyan@gmail.com

ARCHBISHOP TIRAN NERSOYAN'S ARCHIVE IN THE PATRIARCHIAL ARCHIVE OF THE ARMENIAN PATRIARCHY OF JERUSALEM (REPORT)

Keywords: Abp. Tiran Nersoyan, Armenian Patriarchate of Jerusalem, Patriarchal Archive, archive, correspondence, textbooks, translation.

Several archival writings of an outstanding clergyman of the Armenian Church, Archbishop Tiran Nersoyan (1904–1989), are preserved in the Patriarchal archive of the Armenian Patriarchate of Jerusalem. Until recently, they were scattered in various vaults and files of the Patriarchal Archive. This article describes the work of collecting and classifying these materials that was done at the beginning of 2023 by the author of this report. During this work, some unknown and important correspondences, writings, and textbooks belonging to Arch. Tiran Nersoyan were discovered. As he is the author of important studies in Christology, Canon Law, History, and Liturgy of the Armenian Church, preservation, study, and access to his archival writings can promote the study and continuation of his unique theology and further research in the aforementioned areas.

Самвел Погосян
Магистр теологии

Института философии, социологии и права, Национальная Академия Наук
samveldpirpoghosyan@gmail.com

АРХИВ АРХИЕПИСКОПА ТИРАНА НЕРСОЯНА В ПАТРИАРШЕМ АРХИВЕ АРМЯНСКОГО ПАТРИАРХАТА В ИЕРУСАЛИМЕ (СООБЩЕНИЕ)

Ключевые слова: Арх. Тиран Нерсоян, Армянский Патриархат, Патриарший архив, архив, переписка, учебники, перевод.

В Патриаршем архиве Армянского Патриархата в Иерусалиме хранятся несколько архивных сочинений выдающегося священнослужителя Армянской Церкви, архиепископа Тирана Нерсояна (1904–1989). До недавнего времени они находились в разных хранилищах и папках Патриаршего архива. В данной статье описана работа по сбору и классификации этих материалов, проведенная в начале 2023 года автором данного отчета. В ходе этой работы были обнаружены некоторые ранее неизвестные и важные переписки, сочинения и учебники, принадлежащие архиепископу Тирану Нерсояну. Учитывая его значимый вклад в исследования по христологии, каноническому праву, истории и литургии Армянской Церкви, сохранение, изучение и доступ к его архивным сочинениям могут способствовать продолжению его уникального богословского наследия и дальнейшему развитию указанных областей.